

<<Հրդեհների վիճակագրություն>>

2014թ. երկու ամիսների ընթացքում ՊՀ և ՏԱ տեսչության կողմից հաշվառվել է 295 հրդեհ՝ շուրջ 176 միլիոն դրամի նյութական վնասով: Հրդեհներից զոհվել է 13, վնասվածքներ ստացել՝ 12 մարդ: Ոչնչացել է 6 շինություն, 3 միավոր ավտոտրանսպորտ, շուրջ 199 տոննա անասնակեր:

Հրդեհների քանակը նվազել է Շիրակի մարզում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և մնացած բոլոր մարզերում: Հրդեհների 49.49%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 50.51%-ը՝ գյուղական բնակավայրերում: Դրանց 48.13%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 29.15%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 4.74%-ը՝ ավտոմեքենաներում, 4.74%-ը՝ գյուղատնտեսական նշանակության օբյեկտներում, 3.38%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, 2.03%-ը՝ ոչ բնակելի մասնավոր օբյեկտներում, 1.69%-ը՝ արտադրական շենքերում, իսկ 6.14%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 48.13%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 20.33%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 12.54%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 6.44%, հրկիզումները՝ 2.03%:

Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 7-ը խոշոր և առավել խոշոր են, որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է շուրջ 148.5 միլիոն դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 84.33%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

1) 02.02.14թ.՝ Արարատի մարզ, գ. Արմաշ, <<Մանանա գրեյն>> ՍՊԸ այրաղացի պահեստ՝ 76 081 755 դրամ:

2) 22.02.14թ.՝ Արարատի մարզ, գ. Ավշար, շինանյութի պահեստ՝ 30 000 000 դրամ:

3) 05.01.14թ.՝ Սյունիքի մարզ, գ. Աջաբաջ, գոմի տանիք՝ 21 030 000 դրամ:

4) 15.01.14թ.՝ Արարատի մարզ, գ. Արմաշ, առևտրի սրահ՝ 9 000 000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում թվով 13 հրդեհներում զոհվել է 13 քաղաքացի: Չոհերով հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, հրկիզումը, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների և վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը: Չոհերն արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. ք.Երևան՝ 3, Արմավիր, Արարատ, Արագածոտն և Կոտայք՝ երկուական, Շիրակ և Լոռի՝ մեկական: Դրանց գերակշիռ մասը՝ 11-ը, գրանցվել է բնակելի հատվածում, որոնցից 4-ը տարեց մարդիկ են:

Վնասվածքներ են ստացել 12 քաղաքացիներ, որոնցից 8-ը՝ բնակելի հատվածում, 3-ը՝ ավտոմեքենայում, 1-ը՝ ԱԳԼՃԿ-ում: Վնասվածքները գրանցվել են ք.Երևանում՝ 5, Լոռիում՝ 3, Գեղարքունիքում՝ 2, Արագածոտնում և Արմավիրում՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են ճանապարհատրանսպորտային պատահարը, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, անզգուշությունը ծխելուց, վառելանյութի արտահոսքը և պայթյունը:

Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 75 որոշում, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանների դատախազությունների կողմից: Դատաքննչական մարմիններ են ուղարկվել 42 հրդեհի նյութեր, որոնցից 4-ով քրեական գործի հարուցումը մերժվել է, հարուցվել է 1 քրեական գործ:

ՀՀ ԱԻՆ ՊՀ և ՏԱՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ
Ս. Հայրապետյան